

ԲԱՌԱՅԻՆ ՇԵՇՏ



Երևանի հ. 75 հիմնական դպրոց
Ուսումնական նյութ՝ V դասարանի աշակերտների համար
Ուսուցչուհի՝ Ն. Զեյնալյան

Բառի որևէ ձայնավորի կամ վանկի առավել
ուժգին արտասանությունը կոչվում է շեշտ:

Բառային շեշտը լինում է 3 տեսակ՝

1. կայուն,
2. շարժական
3. կայուն-շարժական:

*Հայերենում շեշտը կայուն-շարժական է: Կայուն է,
որովհետև միշտ դրվում է բառի վերջին վանկի
ձայնավորի վրա, և շարժական է, որովհետև բառի աճման,
ձևափոխության հետ մեկտեղ շեշտը ընկնում է վերջին
վանկի ձայնավորի վրա:*

Օրինակ՝ քաղա՛ք, քաղաքի՛, քաղաքացի՛, քաղաքայի՛ն

Հայերենում շեշտ կրում են ա, օ/ո/, է/ե/, ի, ու
ձայնավորները:

Շեշտ չի կրում ը ձայնավորը, քացառությամբ այն
դեպքի, երբ ը-ն քառի միակ ձայնավորն է:

Օրինակ՝ քնությունը, դնի ստր, վա՛գր, քացառություն՝
Մաը՛ր, չը՛ իսկ, թրը՛ իսկ և նման այլ քառերում, որտեղ ը-ն
միակ ձայնավորն է. և՛ գրվում է, և՛ շեշտ է կրում:

Բացի ընդունված օրինաչափությունները բառային շեշտի հետ կապված մենք ունենք բացառություններ, որտեղ շեղվում ենք վերջնականային դիրքից և շեշտը դրվում է ոչ թե բառի վերջին ձայնավորի, այլ նրան նախորդող կամ առաջին վանկի ձայնավորի վրա:

Որոշ դեպքերում շեշտվում է նախավերջին կամ նրան նախորդող մեկ այլ վանկի ձայնավորը.

Օրինակ՝ քանի՛երորդ, ո՛րերորդ, ո՛րևէ, ո՛վևէ, ու՛մևէ
նա՛մանավանդ, իհա՛րկե, մի՛միայն, մի՛գուցե

Ունենք բառեր, որոնք ունեն երկակի
արտասանություն. *երորդ* մասնիկով կազմված
թվականները և մի քանի այլ բառեր.

Օրինակ`

քա՛ներորդ - քա՛ներո՛րդ
տա՛սներորդ - տա՛սներո՛րդ
նա՛ն - նա՛ն
գո՛նե - գո՛նե
մա՛նավանդ - մա՛նավա՛նդ
նու՛յնքան - նույնքա՛ն

Որոշ օտար հատուկ անունների ուղիղ ձևերում
պահպանվում է բնագրի շեշտադրությունը:
Ինչպես՝ Պու՛շկին, Ա՛նգլիա, Լե՛րմոնտով:

Փոփոխված ձևերում, սակայն, այս բառերում
գործում է հայերենի ընդհանուր կանոնը.
օրինակ՝ Պուշկինի՛, Անգլիայի՛ և այլն:

Հարադրություններում՝

մո՛տ գալ, վե՛ր կենալ, խելքի՛ գալ, հե՛նց որ, ո՛չ թե

Սակայն ունենք նաև դեպքեր, երբ
հարադրություններում շեշտը դրվում է ոչ թե
առաջին, այլ վերջին բաղադրիչի վրա:

Օրինակ՝ ի դե՛պ, քիչ-քի՛չ, ուտել-խմե՛լ,
հարյուր մե՛կ

Հայերենում ունենք բառեր, որոնք առհասարակ
շեշտ չեն կրում.

եմ - օժանդակ բայը

մի - անորոշ մասնիկը

և, ու - շաղկապները